ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

.այաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
: Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00,
ɜghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 օգոստոսի 2019թվականի N 315

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594 հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 31-ի թիվ 54 որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող Նռնաձոր բնակավայրի 1-ին փողոց 1-ին փակուղի թիվ 3/3 հասցեում գտնվող գույքը՝329,6 քմ հողամասի վրա ամրակայված 71,23 քմ բնակելի տունը և 5,92 քմ ծածկը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N17052019-09-0028)նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությանը՝ որպես նրա սեփականություն:
2.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության մասին պայմանագիր:
3.Ընդունել ի գիտություն,որ.
1) նվիրատվության մասին պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման,իսկ դրանից ծագող իրավունքը՝պետական գրանցման Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում.
2)Պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են նվիրառուի կողմից.
4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կազմակերպական բաժնի պետ Վ. Սարգսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 5
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00,
meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2019թվականի N 316

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ և 7-րդ հոդվածներով, Հայաստանի Հանարպետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N36-Ա և 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Փոխել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող 0,002 հա (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0068) բնակավայրերի հասարակական հողերի գործառնական նշանակությունը, որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր:

2.Նշված հողատարածքը հանել բնակավայրերի հասարակական հողերի հաշվեկշռից և ընդգրկել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի հաշվեկշռում:

3.Քաղաքաշինության, հողօգտագործման, գյուղատնտեսության և գույքի կառավարման բաժնի պետին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ**

2019թ. օգոստոսի 6
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00,
meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2019թվականի N 317

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերին տրամադրել՝

1) 0,002 հա բնակավայրերի նշանակության հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0068) <<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի փողոց, թիվ 36Ա/40>> հասցե.

2) 0,00525 հա բնակավայրերի նշանակության հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0025-0001-ից)<<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, ք. Մեղրի, Փարամազի փողոց, թիվ 42/7>> հասցե:

3) 0,00256 հա բնակավայրերի նշանակության հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0025-0001-ից)<<Սյունիքի մարզ, Մեղրի համայնք, ք. Մեղրի, Փարամազի փողոց, թիվ 42/8>> հասցե:

2. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ**

2019թ. օգոստոսի 6
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2019թվականի N 318

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594 հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 31-ի թիվ 55 որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Սեթանց աղբյուր թիվ 1/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N19072018-09-0020,կադաստրային ծածկագիր՝ 09-005-0715-0001)1,04007 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածների օբյեկտների հողերի կատեգորիա՝ <<կոմունալ ենթակառուցվածների հողեր>> գործառնական նշանակության հողամասը և նրա վրա ամրակայված ջրատնտեսական շինությունները նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Ջրային կոմիտեի, որպես նրա սեփականություն:
2.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության մասին պայմանագիր:
3.Ընդունել ի գիտություն, որ.
1)նվիրատվության մասին պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման,իսկ դրանից ծագող իրավունքը՝պետական գրանցման Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում.
2)Պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են նվիրառուի կողմից.
4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կազմակերպական բաժնի պետ Վ. Սարգսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 6
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00,
meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2019թվականի N 319

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ,ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ և 48[1]-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշմամբ սահմանված կարգի 46.2 կետի թ) ենթակետով, Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հուլիսի 31-ի N50 որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 2017 թվականի մարտի 17-ին տրված օգտակար հանածոյի արդյունահանման ՇԱԹՎ-29/290 թույլտվության փոփոխությունը և <<Մեղրու ՃՇՇՁ>> ՍՊԸ-ի գրավոր հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վահրավար գյուղի Շիվեր թաղամասի թիվ 80/6 հասցեում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N29052019-09-0021 վկայական) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիայի «ընդերքօգտագործման հողեր» գործառնական նշանակության 1.60014 հա հողամասը կառուցապատման իրավունքով, 37 տարի ժամկետով, տարեկան մեկ հարյուր իննսունութ հազար յոթ հարյուր երեսունութ (198 738) ՀՀ դրամ վճարով տրամադրել <<Մեղրու ՃՇՇՁ>> ՍՊԸ-ին՝ ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման համար:
2.Ընդունել ի գիտություն, որ հողամասի կառուցապատման իրավունքի մասին պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:
3. Սահմանել, որ.
1)կառուցապատման իրավունք ձեռք բերող անձը պարտավոր է վարձավճարը վճարել հավասար չափերով ըստ տարվա օրացույցային եռամսյակների, ոչ ուշ քան հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը՝ Մեղրիի համայնքապետարանի 900305081508 հաշվարկային հաշվին.
2)Կառուցապատողը վարձավճարների ամբողջությամբ կամ մասնակի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարում է տուգանք՝ վարձատուին չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով.

3)կառուցապատման իրավունքի մասին պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում է կառուցապատման իրավունք ձեռք բերող անձի միջոցների հաշվին:
4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կազմակերպական բաժնի պետ Վ. Սարգսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. Օգոստոսի 6
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00,
meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2019թվականի N 320

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ)ԳԵՎՈՐԳ ԺՈՐԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի 31 հուլիսի N 47 որոշումը և Գևորգ Ժորայի Հայրապետյանի գնման նախապատվության առաջարկությունը ընդունելու մասին համաձայնագիրը.

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Ագարակ քաղաքի Չարենցի փողոցի թիվ 7/5 հասցեում գտնվող, օրինական ճանաչված 35,6 քառ.մ մակերեսով շինությունը (ավտոտնակը), (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 03.05.2019թ. N 03052019-09-0027 վկայական) և նրա համար սահմանված կարգով առանձնացված 0.00356 հա մակերեսով բնակավայրերի բնակելի հողերի կատեգորիա՝ «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության հողամասը (ծածկագիր՝ 09-002-0042-0024) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով ՝ 24564 (900305081482 հաշվեհամարին ավտոտնակի համար 10 000 դրամ x 0,069 x 35,6 քմ = 24564 /քսանչորս հազար հինգ հարյուր վաթսուն չորս /),12175 (900305081367 հաշվեհամարին պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար 342 դրամ x 35,6քմ =12175 /տասներկու հազար հարյուր յոթանասուն հինգ /) ՀՀ դրամով օտարել կառույցն իրականացրած ֆիզիկական անձ՝ Գևորգ Ժորայի Հայրապետյանին:

2. Վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝

(վճարման անդորագրերի հիման վրա) 12 500 (տասներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ պետական գրանցման , 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ պետական տուրքի ,5000 (հինգ հազար) ՀՀ դրամ միասնական տեղեկանքի համար և 5000 դրամ հասցե տրամադրելու համար՝ 900305081433 հաշվեհամարին:

3. Ընդունել ի գիտություն, որ անշարժ գույքի առքուվաճառքի մասին պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

4.Կազմակերպական բաժնի պետին ՝ Վ. Սարգսյանին ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ**

2019թ. օգոստոսի 6
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00,
meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2019թվականի N 321

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N843-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը, Լուսիկ Սահակյանի՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. օգոստոսի 6-ի N 3102-Ֆ հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Անհատ ձեռնարկատեր Լուսիկ Սահակյանին (գրանցման համարը՝ 79.1075221) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Չարենցի փողոցի թիվ 23/10 հասցեում գտնվող առևտրի սրահում թույլատրել 2019 թվականի հուլիսի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ**

2019թ. օգոստոսի6
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00,
meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 օգոստոսի 2019թվականի N 322

<<ՍՏՈ ԱՌՄ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31 -Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N108-Ն որոշումը և <<ՍՏՈ ԱՌՄ>> ՍՊ ընկերության՝ համայնքի ղեկավարին ներկայացրած 2019թ. օգոստոսի 7-ի N 3136-Ֆ հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

<<ՍՏՈ ԱՌՄ>> ՍՊ ընկերությանը (գրանցման համարը 282.110.1004193) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Գործարարների թիվ 12 հասցեում գտնվող լիցքավորման կետում թույլատրել 2019 թվականի մայիսի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը զբաղվելու հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ**

2019թ. օգոստոսի 7
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ Սյունիքի մարզ ք.Մեղրի Զ.Անդրանիկի 2, Հեռ. +374 286 4-34-23, +374 286 4-35-00,
meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2019թվականի N 323

ԴԱՎԻԹ ԳՈՒՐԳԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1 մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Դավիթ Գուրգենի Հարությունյանի՝ համայնքի ղեկավարին ուղղած 2019 թվականի օգոստոսի 8-ի N 3150 դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի թիվ 121/1 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Դավիթ Գուրգենի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 0,1754 հա բնակավայրերի հողերի կատեգորիա՝ <<խառը կառուցապատման հողեր>> գործառնական նշանակության հողամասում (ծածկագիր 09-002-0061-0013, սեփականության իրավունքի վկայական թիվ 09082018-09-0026) 41.6քմ մակերեսով ինքնակամ կառուցված ծածկը,60.35 քմ մակերեսով բետոնե հարթակը ու 4.8 քմ ինքնական կառուցված պարիսպը, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ճանաչել օրինական:
2.Տեղեկացնել Դավիթ Հարությունյանին, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N912-Ն որոշման 2-րդ գլխի 22-րդ կետի գ) ենթակետով սահմանված վճարները՝
1) Ծածկի համար 57 408(հիսունյոթ հազար չորս հարյուր ութ) ՀՀ դրամ (41.6 քմ x 20 000 դրամ x 0.069 = 57 408 ՀՀ դրամ),
2) Բետոնե հարթակի համար 83 214(ութսուն երեք հազար երկու հարյուր տասնչորս) ՀՀ դրամ (60.3 քմ x 20 000 դրամ x 0.069 = 83 214 ՀՀ դրամ),

3)Պարիսպի համար 6624(վեց հազար վեց հարյուր քսանչորս)ՀՀ դրամ (4.8 քմ x 20 000 դրամ x 0.069 = 6624 ՀՀ դրամ)60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. օգոստոսի 8
ք.Մեղրի